ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 17 № 17

Պրոլէտարնե՛ր բոլոր երկրների, միացէք.

Գ. ՀԱՑԿՈՒՆԻ

ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ

ԵՒ

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ

327
Հ-204

~~Գին 4 դր. 50 կ.~~ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 17 № 17

Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք.

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

Գ. ՀԱՅԿՈՒՆԻ

ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ

եւ

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՄՈՍԿՈՒԱ—1919

A II/9703

Տպարան՝ Կենտրոն. Հայկական Կոմիսարիատի, Մոսկվա, Արմեանսկիյ փ., տ. 2

Типография Центрального Армянского Комиссариата. Москва, Армянск. п. 2

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Պրոլէտարական յեղափոխութիւնը և Արմէնիայի Բոլշեւիկները» գրքոյկում արձանագրեցինք և դրա հետ միասին վերակենդանացրինք շատ շատերի յիշողութեան մէջ պատմական այն արժէքաւոր փաստերը՝ կոմունիստական շարժման հետ կապած, որոնց շուրջը հետևողական ու որոշ արտայայտել է Արմէնիայի Բոլշեւիկեան կուսակցութիւնը՝ Թէ իր ժողովներում և Թէ 18 Թ-ի օրգանների մէջ:

Այժմ անհրաժեշտ ենք համարում կանգ առնել ամենակարևոր ու սկզբունքային խնդիրներից մէկի՝ մանր ազգութիւնների ինքնորոշման խնդրի վրա, որի տեսական ընդունման և գործնական ճշգրիտ լուծման վրա էր խարսխած Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան հրապարակ գալն ու նրա գոյութեան անհրաժեշտութիւնը և որը այնքան յուզել է մինչև իսկ կուսակցական ընկերներին և քանիցս բուռն մտքերի փոխանակութեան առարկա հանդիսացել:

Ազգութիւնների ինքնորոշումն ընդհանրապէս՝ լինելով ամենասուր ու փափուկ հարցերից մէկը, պիտի բևեռէր իր վրա ամենի ուշադրութիւնը և Հայաստանի ինքնորոշումը մասնաւորապէս՝ առաջ պիտի բերէր, անշուշտ, Թեր և դէմ կարծիքներ, քանի որ զրեթէ առաջին անգամ իր ամբողջ խորութեամբ ու այնպէս որոշակի համարձակ հրապարակի վրա էր դրուում այդ և պահանջում իր պրոլէտարական, Բոլշեւիկեան լուծումը...

Փորձենք ներկա գրքոյկում պարզել մեր տեսակէտները բանաւոր ու գիտական ընկերների առաջ, համառօտակի շեշտելով մեզ հետաքրքրող խնդիրը և տանք մի քանի ցիտատներ, քաղած Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան կենտրոնական օրգաններից:

Գ. Հ.

I

Ամենուրեք բուրժուական-նացիոնալիստական տարրերը շահագործելով ազգութիւնների «ինքնորոշման» լոզունգը, ամեն կերպ տքնել են նրա հրապուրիչ ազդեցութեամբ բթացնել ու մթնացնել աշխատաւորական մասսաների գիտակցութիւնը, անջատել նրանց մեծ, պրոլէտարական շարժումներից, խափանելու բանւորութեան և գիւղացիութեան վսեմ ազատագրման գործը։

Բուրժուական նացիոնալիստական կուսակցութիւնները, դրանց հետ միասին նաև դեղին, սոցիալ-դաւաճան «դէմոկրատները», ամեն տեղ ձգտել են թուլացնել միջազգային պրոլէտարիատի մէկ և եղբայրական ընտանիքը. ամեն կերպ աշխատել են միջազգայնօրէն կազմակերպուած այդ հզօր միութիւնը բաժանել ըստ ազգութիւնների, սահմանափակելու նրանց լայնաժուռի շարժումը նեղ, ազգայնական-նացիոնալիստական կեղևի մէջ։

Թուլացնելով ու բաժան-բաժան անելով պրոլէտարական հուժկու դինակցութիւնը, նրանք ձգտել են բոլորքոքել մասսաների շուրջն բնազդները, ուղղել աշխատաւորներին իրար դէմ փոխադարձ ոչնչացման սուր դիտաւորութեամբ, լանուն ազգութեան իշխող, վերին դասակարգերի, այն է,—լանուն բուրժուազիայի ու կալուածատիրութեան, և սրանց արբանեակ կղերականութեան։

Ազգութիւնների ինքնորոշման դիմակի տակ թագնուած, մանր ժողովրդների բուրժուական-նացիոնալիստական տարրերը վարպետօրէն աշխատել են իրենց հակա-յեղափոխական գործ-

նէութեանը աւելորդ տալ յեղափոխական բնոյթ, որ մոլորեցնեն աշխատաւոր մասսաներին, և սրանց բուրթ գործիք դարձնելով իրենց ձեռքում, ծառայեցնեն բուրժուազիայի վաղեմի փայփայած ամենասանկուշտ ու ստոր ձգտումներին։

Ազգութիւնների ինքնորոշման այլասեռած լոզունգի տակ մանր ժողովրդի բուրժուական-ազգայնական խմբակցութիւնները էապէս ու փաստօրէն կռիւ են մղել ուժեղ ազգութեանց տիրող, կապիտալիստական-կալուածատիրական ուժերի դէմ,—միայն այն չափով, որ նախօրօք ապահովեն իրենց տիրապետութիւնը ազգային սահմաններում և ապա, իրենց հերթին, խեղդեն աւելի թոյլ ու մանր ժողովրդներին։

Ճնշող ազգութեան բուրժուական-բէգական տարրերը հնչելով անգամաբ «ինքնորոշման» լոզունգը, իրապէս ոչ թէ ձգտել են ժողովրդների «ազատութեան, եղբայրութեան ու հաւասարութեան» մեծ դաղափարին, այլ ունեցել են իրենց զուտ դասակարգային շահերից բղխած մի նպատակ, այն է—

Ազգութեան աշխատաւորական մասսաների արեան գրնով յետ մղել աւելի զօրեղ մրցակից-բուրժուական ուժերը, հաստատելու իր, ազգային բուրժուազիայի կամ կալուածատիրութեան դերիշխանութիւնը «ազգային հորիզոններում»...

Բուրժուական—նացիոնալիստական կուսակցութիւնները երբէ՛ք, և օ՛չ մի տեղ չեն ձգտել, և չեն էլ կարող ձգտել, իրենց դասակարգային շահերին հակառակ, ազգութեան բանուորական, գիւղացիական խաւերի ճշմարիտ ազատագրմանը։ Նրանք փոքրամասնակ դէմ են՝ ազատագրելով աշխատաւորութիւնը մի այլ ազգութեան զօրեղ կեղեքողներից, ազգային իսկ սահմաններում տալ բանուորներին և գիւղացիներին ճշմարիտ ազատութիւն, լոյն մասսայականօրէն կազմակերպուած իշխանութիւն։

Այդ է պատճառը, որ ազգայնական-շովէն կուսակցու-

թիւնները կատաղի կռիւ են մղում ազգային սահմանների մասին բոլշեւիկական շարժման դէմ. նրանք ամենակիսի հալածանքն են գործադրում բանւորութեան և գիւղացիութեան միակ պաշտպան հէնց իրենց ազգութեան կոմունիստների դէմ. բանտերը լցնելով ու գնդակահարելով նրանց, դեռ ևս անամօթաբար յայտարարում են վերջիններիս «ազգութեան դաւաճաններ»...

Որովհետև կոմունիստները, վճռական կռիւ մղելով ամեն տեսակ ու ամեն կողմից եկած բանութիւնների դէմ, կուրծք տալով գրսից խոյացող իմպերիալիստական—բուրժուական—բէգական նուաճումներին, միաժամանակ ձգտում են ներսում օր առաջ խորտակել ազգային բուրժուազիայի, այն է ազգային թալանչիների—ազգային ազրուկների անարգլուծը, օր առաջ հաստատելու ներսում միմիայն բանւորների և գիւղացիների կառավարութիւն—Խորհրդների Իշխանութիւնը։

Այդ է պատճառը, որ ազգային բուրժուազիան ամենացինիկ կերպով խաբում է ազգային աշխատաւորութեանը. այդ է պատճառը, որ նա այնպիսի ատոր կռիւ է մղում Բանւորա—Գիւղացիական Իշխանութեան, Խորհուրդների դէմ։

Ազգութիւնների «ինքնորոշումն» կանչելով՝ բուրժուազիան հասկանում է միմիայն իր տիրապետութիւնը։ Մանր «ազգերի ազատութիւն» ասելով, նա հասկանում է միմիայն ազգութեան բուրժուազիայի բացարձակ ազատութիւնը—անվերջ կեղեքելու ազգային զիւղացիներին և բանւորներին, անպատիժ ծծելու նրանց վերջին հիւթերը։

Ինչպէս որ «օտար», այնպէս էլ ազգութեան աշխատաւոր մասսաները «ազգային» բուրժուազիայի համար կրթելու կովեր են, որոնցից օգտուելու «սրբազան, աստուածային իրաւունքը» պատկանում է նրան, բուրժուազիային։

Ուստի «ազգային» բուրժուազիան ամենայն

«սիրով» խնամում է իր «ազգային հօտը» վայրի գայլերից։

Սակայն, պատմութեան ընթացքում մենք բազմաթիւ փաստերով վերջնականապէս համոզուել ենք, որ «ազգութեան պահպան» բուրժուազիան, հարուստ դասակարգը, շատ ու շատ անգամներ սիրայօժար բաց է թողել դրսից եկած գայլերին «իր ազգային սեփական հօտի մէջ», այն է՝ ազգային բանուորների և գիւղացիների մէջ, նրանց յօշոտելու և պատառ-պատառ անելու,—հէնց որ «ազգային հօտ»— պրօլէտարական մասսաները, իրենց դէմ գործադրւած բռնութիւնների պատճառով, յուզմունքի և «անհնազանդութեան» նշաններ են ցոյց տալ...

«Ազգային հօտի անհնազանդութեան» դէմ շատ ու շատ աւելի անողոք կռուել են հէնց ազգի ունևոր դասակարգերը՝ բուրժուազիան և կալւածատէրերը։

Ռուսատանի, Ուկրաինայի, Ֆինլանդիայի, Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի և այլն, հակայեղափոխական, բուրժուական—կալւածատիրական դասակարգերի կազմակերպած սպիտակ գվարդէականների անլուր և պատմութեան մէջ նմանը չունեցող անթիւ, հրէշաւոր ու դաղրելի գազանութիւնները, գործադրած հէնց իրենց իսկ սեփական ազգութեան բանուորների և գիւղացիների դէմ, գոնէ այժմ թող դեղեցիկ ապացոյց ծառայեն աշխատաւորութեան համար, որպէսզի նա վերջնականապէս ըմբռնի ու հասկանա այն բարբարոս, նենգ ու դաւադիր քաղաքականութիւնը, որ վարել են ու վարում են անամօթ բուժուազիան, և այլ դաւաճան, դեղին—սոցիալիստական խմբակները...ի դիմաց բազմաչարչար աշխատաւոր ժողովրդների։

«Ազգութեան ինքնորոշման» լոզունգը բուրժուական նացիօնալիստական կուսակցութիւնների բերանում չափազանց վտանգաւոր է պրօլէտարական, աշխատաւորական մասսաների համար։

«Ազգի ազատութիւն» սին և խարուսիկ խօսքերի տակ, մանր ազգութիւնների բուրժուազիան և նրա վարձկանները աշխատել են հարիւր հազարաւոր գիւղացիների և բանւորների, հարիւր հազարաւոր կանանց ու մանուկների, կեանքի և գեներով հոսող արեան գնով հաստատել և պահպանել հարուստների անչափ սուր ու անարդ տիրապետութիւնը։

«Ազգի ինքնորոշման» և «ազգի ազատութեան» լոզունգը դարձել էր ամենաթունաւոր, ամենավտանգաւոր զէնքը ընդհանրապէս բոլոր իմպէրիալիստների և բոլոր նացիօնալիստ—բուրժուա—ազգայնականների ձեռքում։

Պէտք էր մի վճռական, մի զօրեղ հարուածով խլել բուրժուազիայի ձեռքից այդ երկսայրի սուր—ազգութիւնների ինքնորոշումը։

Պրօլետարական երկաթէ բազուկներով, և պրօլետարական առողջ մտքով միայն անկասկած, հնարաւոր էր խլել բուրժուազիայի ձեռքից նրա փայլփլուն, բայց երկսայրի սուրը և անմիջապէս հարուածել նրան իր իսկ զէնքով։

Եւ Ռուսաստանի պրօլետարական յեղափոխութիւնը, նրա ղեկավար Կոմունիստական կուսակցութիւնը առանց դանդաղելու, առանց տատանուելու ի լուր աշխարհի յայտարարեց բոլոր ազգութիւնների ճշմարիտ ինքնորոշումը։

Խորհրդային Իշխանութիւնը իր պրօլետարական առողջ քաղաքականութեամբ ամենուրեք դիմաթափ է անում աշխատաւորական մասսաների դարաւոր թշնամիներին։

Մանր ազգութիւնների ճնշումն ու հալածանքը, լինելով անմիջական հետևանք տիրող բուրժուական—իմպէրիալիստական կարգերի, պէտք է որ անհետանային անմիջապէս բուրժուազիայի ջախջախելու հետ միասին։

Կոմունիստական պրօլետարիատ — Խորհրդային Իշխանութիւնը, կոիւ մղելով մարդկութեան թշնամիներ իմպէրիալիստական—բուրժուական պետութիւնների դէմ, պէտք է վերջ տար մանր ազգութիւնների վերաբերմամբ բուրժուազիայի գործադրած բոլոր բռնութիւններին։

Պէտք է յայտարարէր բոլոր ազգութիւնների ճշմարիտ ինքնորոշման իրաւունքը.—

Ինքնաբուխ և եղբայրական զինակցութեան հանապարհը ցուցնելով ամենքին։

Յայտարարելով ազգութիւնների ինքնորոշման լոզունգը՝ Խորհրդային Ռուսաստանը ներշնչեց անկեղծ վստահութիւն դէպի յաղթական պրոլէտարիատ.—

Ամենաուժեղ անքակտելի կապերով միացնելու իրար միջազգային աշխատաւորութիւնը։

Ազգութիւնների ինքնորոշման լոզունգով Բոլշևիկական կուսակցութիւնը լայն ուղի բաց արաւ բոլոր երկրների, բոլոր ազգերի կօմունիստներին առաջ, կոչ անելով նրանց՝ վճռական կռիւ մղել զիշատիչ իմպէրիալիստների դէմ, ապալով շուտով «հայրենի» բուրժուազիան և անկեղծ, եղբայրական ձեռք մեկնել հարազատ, մարանչող պրոլէտարիատին, Խորհրդների Իշխանութեանը։

Ազգութիւնների ինքնորոշման լոզունգը բոլշևիկների բերանում դա մի մարտական, վսեմ կոչ է, դա մի անդուդական, հերոսական կռիւ է բոլոր երկրների, բոլոր ազգութիւնների կօմունիստների համար.—

Բոլոր ազգութիւնների, բոլոր երկրների շահագործող, ունևոր դասակարգերի և միջազգային իմպէրիալիստական բանակի դէմ,

Ցանուն բոլոր աշխատաւորների վերջնական ազատագրման, յանուն կօմունիստական կարգերի փայլուն հաստատման։

Ազգութիւնների ինքնորոշման լոզունգով ընդհանրապէս և Հայաստանի ինքնորոշմանդէպքերով մասնաւորապէս, Խորհրդային Ռուսաստանը կեանքի և հերոսական կռիւ կանչեց Հայաստանի կօմունիստներին,

Արմէնիայի աշխատաւոր մասսաների միակ ու հարազատ ներկայացուցիչներին։

Հայաստանի ինքնորոշման դէկրէտով Բոլշևիկեան կուսակցութիւնը կեանքի կոչելով Հայաստանի կոմունիստական կուսակցութեան, հարթեց իր երիտասարդ ընկերների փշոտ ուղին, վերջնական ու վճռական քաղաքացիական կռիւի մէջ յենարան ու նեցուկ հանդիսանալու նրան։

II

Պրոլէտարական յեղափոխութեան այս օրինակ դարաշրջանում Արմէնիայի կոմունիստները լսելով հոմաշխարհային ըմբոստացող պրոլէտարիատի հերոսական ջանքերը, ոգևորված Ռուսաստանի Խորհրդային իշխանութեան փայլուն յաղթանակներով, Կոմունիստական Ինտերնացիոնալի դրօշակի տակ, Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան անունով, մտան քաղաքացիական կռիւի ասպարէզ, բոլոր կոմունիստական նշանաբանների շարքում ունենալով նաև մի մարտական կոչ.—

Դէպի մասսական ըմբոստացում,

Ցանուն Արմէնիայի ինքնորոշման.—անկախ Բանուորա—Գիւղացիական կառավարութիւն, Խորհրդների Իշխանութիւն հաստատելու Հայաստանում։

Հայաստանի ինքնորոշումն ասելով Արմէնիայի Բոլշևիկները չէին հասկանում հայ բուրժուա—նացիոնալիստների փայփայած Բռնապետական Հայաստանը, հայ բուրժուազիայի տիրապետութեամբ, հայ աշխատաւորութեան և նրա հետ միասին միւս բոլոր ազգութիւնների սարկացումով և սրանց սրբազան իրաւունքների գազանային բռնաբարումներով։

Հայաստանի ինքնորոշումն ասելով Արմէնիայի Բոլշևիկները հասկանում էին Հայաստան կոչված տերիտորիայում բնակուող հայ, ռուս, թուրք, քիւրդ, տաճիկ, ասորի, եզիդի և այլն ժողովրդների եղբայրական ու ազատ կենակցութիւնը, Բանուորա—Գիւղացիական Խորհուրդներով.—

Որ պայմանաւորում է.

1) Բոլոր ժողովրդների աշխատաւորութեան միահամուռ գինակցութիւնն ու նրանց մասսայական ըմբոստացումը բոլոր ազգերի շահագործող բուրժուա—բէգական տարրերի դէմ անխարիր՝ ներսում.

2) Եղբայրական ժողովրդների հերոսական կռիւը ամենամի արտաքին, այն է սուլթանական Ֆէօդալիզմի—դերմանական միլիտարիզմի, կամ թէ անգլո—ամերիկական իմպէրիալիզմի դէմ, որոնք յենուած ներքին հակալեղափոխական ուժերի—վերին դասակարգերի վրա, հարուածում են Հայաստանի աշխատաւոր մասսաներին՝ դրսից։

Եւ որովհետև թէ ներքին և թէ արտաքին հակալեղափոխութեան, բուրժուական—Ֆէօդալական, իմպէրիալիստական ուժերը պատմութեան այս նորագոյն դարաշրջանում, պրոլէտարական յեղափոխութեան դէմ մղած կռուում, միացրել են իրենց ուժերը, եռանդն ու թիկունքը կապել իրարու, և կազմել ընդհանուր մէկ Ֆրոնտ՝ սոցիալիստական յեղափոխութեան դէմ, այն է բոլոր ազգերի աշխատաւոր մասսաների դէմ.—

Ճիշտ այդպէս էլ՝ բոլոր երկրների, բոլոր ազգութիւնների պրոլէտարական և գիւղացիական մասսաները պէտք է շտապէին կազմել միջազգային պրոլէտարական մի հզոր գինակցութիւն, ամենուրեք սերտօրէն իրար շաղկապուած՝ կոմունիստական յեղափոխութեան մէկ և միաձայն կարմիր Ֆրոնտը հակադրելու միջազգային իմպէրիալիստների ընդհանուր Ֆրոնտին։

Այս խոր գիտակցութեամբ և անխախտ հաւատով Արմենիայի Բոլշեւիկները, թիկունքով բուրժուա—նացիոնալիստական տարրերի ձեռքից նրանց երկայրի սուրը, և այն անխնա ուղղելով նրանց դէմ, Հայաստանի ինքնորոշման ճշմարիտ նշանաբանով մղել են աշխատաւոր դասակարգերին դէպի քաղաքացիական կռիւ, դէպի Բանւորա—Գիւղացիական Խորհրդների Իշխանութիւնը։

Այս տեսակէտից, և իր ամբողջ գաղափարական էութեամբ, Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը Անդրկովկասի և Հայաստանի դեռ հեղձուցիչ մթնոլորտում վարել է զուտ պրոլետարական, առողջ ու հետևողական քաղաքականութիւն և բոլոր տեսական հարցերում միանգամայն բաժանել է Ռուսաստանի Բոլշևիկական Կուսակցութեան հակոցակիցներից։

Հետևապէս բոլորովին անհիմն և երևակայամիտ պիտի համարել այն քողարկուած առարկութիւնները այս կամ այն անկիւնից ուղղուած մատափաս, և դեռ կոմունիստական շարժման էութիւնը չմարսած, բոլշևիկական շարժումը «սիրոց» անհատների կողմից, որոնք մեր կուսակցութեան սկզբնական շրջանում երկիւղ էին յայտնում, իբրևց ազգայնների հետ միասին, որ «Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը» հայ սոցիալ-նացիոնալիստների (հնչակեանների) երկրորդ հրատարակութիւնը չդառնա...

Իրերի ընթացքն ու պրոլետարական շարժման յեղափոխական զարգացումը Ռուսաստանում և Անդրկովկասում եկան աւելի ու աւելի հարթելու մեր փշոտ ուղին, պրոլետարական յեղափոխութեան ուղին, իր համաձայն ու վստահ կիրառումով մեր կենդանի իրականութեան մէջ։

Յեղափոխութեան ժամանակաւոր պարտութիւնից յետոյ Անդրկովկասում և Հայաստանում, իրար ետևից բռնեցին սունկերի պէս բազմաթիւ մանր ու մանր ազգային հանրապետութիւններ. ուր «ինքնորոշուեցին» անշուշտ ազգային բուրժուաներն ու ազգային կնեազ-բէգերը...

Այսօր, պրոլետարական յեղափոխութեան թափով, ուռճանում է յեղափոխական շարժումը ազգային-բուրժուական հանրապետութիւնների մէջ։

Եւ կասկած չկայ, որ բանուորական շարժման յաղթանակը պիտի ընթանայ վաղը ժողովուրդների ճշմարիտ ինքնորոշման ջղաւնդի տակ։

«Խորհրդային Ադրբէջան...Խորհրդային Վրաստան...» արդէն լսում ենք որոշ։

Կասկած չկա, որ այդ հուներով պիտի ընթանա մեր մօտաւոր ուղին, մեր ժամանակակից նպատակայարմար տակտիկան։

Այդ է պահանջում պրոլէտարական յեղափոխութեան յաղթանակը, այդ է ամենակարճ և ուղիղ դիծը՝ իրար շաղկապելու եղբայրական անկեղծ ու ազատ սիրով հարևան ժողովրդների աշխատաւոր դասակարդերին—

Փոխադարձ հաւատով ու վստահութեամբ։

Դէպի կօմունիստական կարգերը գնանք, ուրեմն, մօմենտի հրամայողական պահանջով՝ միահամուռ բոլշևիկական աշխատանքի մէջ։

Այդպէս է նայել Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը և վերջին ընթանում է օր առաջ փարած իր կարմիր հօրիզոններով։

III.

Վերոյիշեալ դիտողութիւններից յետոյ այժմ անդրադառնանք անհրաժեշտօրէն մեր մօտիկ անցեալին, ուր նմանապէս կգտնենք բոլշևիկեան մտածողութեան հետևողական էջեր։

1918 թ. մարտի 24-ին Կէնտրօնական օրգան «Կարմիր Օրերը» № 10-ի երկրորդ առաջնորդողում ասում է.

«Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը ծնել է մարդկութեան պատմութեան ամենածանր և միևնոյն ժամանակ նշանակալից օրերում։

...«Ռուսաստանի պրոլետարիատը, իր անվեհեր պայքարով բուրժուազիայի դէմ, այսօր երկրորդ ինտերնացիոնալի աւերակների վրայ բարձրացնում է մարտական երրորդ ինտերնացիոնալի ալ-կարմիր դրօշը։

...«Հայաստանի յեղափոխական սոցիալիստ ինտերնացիոնալիստները մեծ և աննկարելի յանցանք գործած կը լինէին սոցիալիստական յեղափոխութեան հանդէպ, եթէ իրենց երկրում չը հնչեցնէին մարտական պրոլետարիատի վսեմ կոչը։ Բոլոր երկրների շահագործող աշխատաւորմատանները այսօր պիտի խտացնեն յեղափոխական սոցիալիզմի շարքերը և երրորդ ինտերնացիոնալի դեկավարութեամբ տան արիւնարբու բուրժուազիային վերջին կռիւը (ընդգծումը մերն է. Գ. Հ.)։

«Այդ դիտակցութեամբ անա Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը պայքար է մղում Հայաստանի ժողովուրդների մէջ»։

Խօսելով այնուհետև ժողովրդների ինքնորոշման և Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան վերաբերմունքի մասին, «Կարմիր Օրերը» շարունակում է.

...«Ազգերի ինքնորոշումը կապիտալիստական կարգերում, մենք քանիցս այդ շեշտել ենք, նշանակում է ուներ գաղտակարգերի ինքնորոշում (ընդգծումները մերն է. Գ. Հ.)։ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնն այդպիսի ինքնորոշման համար չէ, որ հանդէս է եկել։

«Ազգերի ինքնորոշումը մեզ կոմունիստներիս համար, սոցիալիստական յեղափոխութեան այս լուսաւոր գարաշրջանում, նշանակում է շահագործող դասակարգերի ազատագրում կապիտալիզմի լծից» (ընդգծումը մերն է. Գ. Հ.)։

Կապ առնելով Հայաստանի ժողովրդների ազատագրման և նրա յաջող լուծման խնդրի վրա, «Կարմիր Օրերը» նոյն № 10-ում շեշտում է, որ Հայաստանը իր յեղափոխական կռիւում միայն այն ժամանակ կը յաղթանակի, երբ կը պարտի Անդրկովկասեան հակայեղափոխութիւնը.—

«Այդ ազատագրման արշալույսը ծագել է սոցիալիստական Ռուսաստանում. և լեղափոխական Հայաստանը գոյութիւն չի ունենայ, մինչև որ Անդրկովկասում չհաստատուի Խորհուրդների Իշխանութիւնը։

...«Այս է պատճառը, որ մենք մտնելով երրորդ ինտերնացիոնալի մէջ, իբրև Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւն... առանձին ուշադրութիւն ենք դարձնելու Անդրկովկասի սոցիալ-քաղաքական կեանքի վրա և լեղափոխական բաղման ժամին, ինչպէս և հիմա, լինելու ենք ընկեր բոլշևիկների շարքերում»։

18 թ. մարտի 27-ի առաջնորդողում «Կարմիր Օրերը» խօսելով Հայաստանի ժողովուրդների ազատագրման մասին և թէ ինչպէս նրանք ձեռք տաած բոլոր երկրների սոցիալիստական պրոլետարիատին՝ կը թեւակոխեն կոմունիզմի լուսաւոր աշխարհը, անխնա հարուածում է հայ ազգայնականներին.

...«Ազգայնականութիւնն ինքնին հակայեղափոխութիւն է, որովհետև նա խոչընդոտ է հանդիսանում տարբեր ազգութեանց շահագործուող դասակարգերի մերձեցմանն ու եղբայրութեան։ Այն ինչ՝ այդ մերձեցման և եղբայրութեան մէջ է ինչպէս որ բոլոր շահագործուողների, այնպէս էլ Հայաստանի ժողովուրդների ազատագրութեան գրաւականը։

...«Ո՞ր Հայաստանցի աշխատաւոր հայր կամ ասորին կարող է պնդել, որ թիւրք կամ քիւրդ աշխատաւորութիւնը իրենից պակաս է կեղեքւում և հարստահարւում փաշաների, մոլլաների, միւդիրների և սուլթանիզմի ուրիշ հաղարաւոր հաւատարիմ շների կողմից...

...«Բոլոր նրանք, ովքեր ժողովուրդների եղբայրութեան դէմ արդելքներ են յարուցանում —ոճրագործներ են Հայաստանի ինքնորոշման հանդէպ» (ընդգծումը մերն է Գ. Հ.)։

Մարտի 28-ի առաջնորդողում դրելով Հայաստանի ողբերգութիւնը, «Կարմիր Օրերը» մերկացնում է Անդրկովկասի

սէյմն ու կոմիսարիատը, որոնք կապարի ծանրութեամբ ընկած Հայաստանի և Անդրկովկասի ժողովրդների վրա, աշխատաւոր դասակարգերից ծածուկ, կուլիսների ետև սկսել են չարչիների առևտուրը, վաճառելու Հայաստանի ինքնորոշումը...

...«Ամբողջ ժողովուրդների այս մեծ ողբերգութեան մէջ թող յաւէտ նողովին նրանք, որոնք այնպէս անարգ խաղացին աշխատաւոր մասսաների բաղդի հետ, որոնք դաւաճանորէն դեռ շարունակում են մահացու կերպով հարուածել թիկունքից:

...«Պէտք է տեսնել «շէյթանը», որ դարանամուտ այնպէս անամօթ քրքիջներ է արձակում:

«Ո՞ւմ էր հարկաւոր մարդկային այս մեծ աղէտը. Ո՞ւր է «յեղափոխական» կառավարութիւնը և միաձոյլ դեմոկրատիան:

«Յեղափոխական դեմոկրատիայի մէկ ֆրոնտի» փոխարէն այսօր բացուած են բիւրաւոր արիւնաներկ ճակատներ, և Հայաստանի ու Անդրկովկասի աշխատաւոր դասակարգերի բգկուած մարմիններից հեղեղի նման արիւնն է հոսում...

«Եւ դեռ շա՞տ պիտի հոսի արիւնը, քանի կոմունիզմի թշնամիները, աշխատաւոր դասակարգերի դաւաճանները, Ռուսական Մեծ Սոցիալիստական Յեղափոխութիւնից դասալիք, բռնապետութեան փաշաների ոտների առաջ սողաքարշ, կը շարունակեն մեծ եղեռնը, անարդ դաւադրութիւնը:

«Այս արիւնոտ օրերում, հակայեղափոխութեան խեղդող կոշմարի տակ, երբ գնդակահար մեռնում է ազատ գաղափարը, երբ ցարիզմի ասպետներից հալածանքն ու սերբորն է մեզ բաժին ընկել, մենք պարտքի ամենախոր գիտակցութեամբ, որպէս Հայաստանի ժողովրդների միակ և հարազատ ներկայացուցիչը, կանչում ենք անվեհեր.

—Աշխատաւորների թիկունքում վերջ տերադործ խաղերին:

...«Ժողովուրդների ինքնորոշման արշալույսը վարդաշող պիտի ծագէ անշուշտ նաև մեզ համար։

«Սոցիալիստական կուսակցութիւնը դէպի ինքնատակ»։

Մարտի 29-ի առաջնորդողում հրապարակ են բերւում «Դառն ճշմարտութիւններ», որից տեսնում ենք թէ ինչպէս ներքին ազգայնական, հակայեղափոխական ուժերը, փաճառելով Հայաստանի ինքնորոշման իրաւունքը, ողբերգական կացութիւն ստեղծելով աշխատաւոր մասսաների համար, արդէն բացել են Անդրկովկասի դռները արտաքին իմպերիալիստական ուժերի առաջ։

Նոյն № 14-ում խօսելով ներքին հակայեղափոխական ուժերի խաղացած դաւաճանական լկտի դերի մասին, «Կարմիր Օրերը» գտնում է.

...«Մենք մի ֆրոնտ ունենք, դա յեղափոխական ֆրոնտն է՝ ընդդէմ հակայեղափոխութեան. մենք մի կռիւ ունենք՝ դա մեր դասակարգային, քաղաքացիական կռիւն է...(ընդգծումը մերն է Գ. Հ.)։

...«Դէպի այդ ֆրոնտն ենք հրաւիրում բոլոր Անդրկովկասի շահագործողներին»։

Մենշևիկական կառավարութեան կողմից «Կարմիր Օրերի» փակելուց յետոյ երկու շաբաթ անց, ժանդարմերիական-ցենզուրական ամենագաժան պայմաններում, ոլորապտոյտ ճանապարհներով Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը վերսին հրատարակելով իր կենտրոնական օրգանը՝ «Կարմիր Դրոշակ» անունով, առաջին իսկ համարում «Հայաստանի ժողովուրդներին» առաջնորդողի մէջ անհերկիւղ յայտարարում է.

...«Որպէս երրորդ ինտերնացիոնալի մի թեւը, մենք կոմունիստներս ներկա պատմական օրերում ամեն տեղ ձգտում

ենք սոցիալիստական յեղափոխութեան, Խորհուրդների Իշխանութեան։

«Մենք կասկած չունենք, եթէ ոչ այսօր, վաղն անշուշտ եւրոպական բոլոր պետութիւնների մէջ պիտի բռնկի լայնածաւալ սոցիալիստական հրդեհը, կոմունիստական ահեղ շարքերի առաջ պիտի խոնարհին բոլոր իմպէրիալիստները։ Կոմունիզմի յաղթանակն անխուսափելի է ինքնին և ապահովուած է արդէն։

...«Այդ այդպէս է լինելու, որովհետև ոչ ոք պիտի կարենա կասեցնել պատմութեան վազող անիւի ընթացքը։

«Ամրանալով կատարուած իրողութիւնների իմաստը և շեշտելով միանգամ ընդմիշտ, թէ Հայաստանի ինքնորոշման, այն է՝ աշխատաւոր դասակարգերի վերջնական ազատագրման գործը կախուած է միջազգային և մասնաւորապէս Ռուսաստանի պրոլէտարական յեղափոխութիւնից,—

«Դիտակցենք, որ հենց այս տագնապալից, արիւնաոր օրերում դարձեալ Հայաստանի աշխատաւոր ժողովուրդների վաղուան երջանկութիւնը»։

Խօսելով արտաքին միջամտութեան դէմ, թէ ինչպէս թիւրքական ֆէոդալիզմի հորդաները վայրագօրէն ոտնատակ են տալիս ամեն ինչ և վերջնականապէս կամենում են խլել մեզանից Հայաստանի ինքնորոշումը, Ռուսաստանի Մեծ Յեղափոխութեան այդ գեղեցիկ նուաճումը, «Կամիր Դրօշակը» կոչում է.

«Հայաստանը պիտի դատարկի բոլոր աւազակախմբերից։ Հայաստանի ժողովուրդները, իրենք պիտի անօրինեն իրենց բաղդը»։»

Դիտակցելով, որ այդ նպատակին կարելի է հասնել միայն հերոսական ջանքերով, հեռատեսական բոլշևիկեան ուղիով, խորտակելու նախօրօք երկրի ներսում աշխատաւոր դասակարգերի թիկունքում դարան մտած հակայեղափոխութիւնը,

«Կարմիր Դրօշակը» կոչելով դէպի մասսայական քմբոստացման ուղին, թեւադրում է յեղափոխութեան հրամայողական պահանջը.

...«Եւ յեղափոխական այս արշաւի հետ ի մի պիտի ծուլուին Հայաստանի բոլոր ժողովուրդները, կազմեն Սոցիալիստական մի հզօր բանակ, որ արթուն և անվեհեր լինի մաքառման ժամին։

«Ղեկավար բոլոր մարմինները պիտի ընտրեն Հայաստանի աշխատաւոր մասսաների կողմից և կազմուած պիտի լինեն միայն նշմարիտ սոցիալիստներից։

«Սոցիալիստական ղեկավար մարմիններ.

«Միջազգային Կարմիր Բանակ.

«Անվեհեր կռիւ Ցանուն Հայաստանի Ինքնորոշման.

«Ահա մեր ուղին։

Անվեհեր կռիւ, ըմբոստացման ուղիով Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը օրէ-օր դնում է աւելի խրոխտ և արէ-օր դառնում մասսայական կազմակերպութիւն։

Աշխատաւորական խաւերը կապւում են նրա հետ սիրով և առանձին զորով դէպի երիտասարդ, Արմէնիայի Բոլշևիկները ցոյց են տալիս թիւրքահայերը։ Մենք մի այլ առիթով կաշխատենք լուսաբանել թիւրքահայութեան մէջ առաջացող բոլշևիկեան խմբումը, այսօր միայն ընդգծենք, որ Հայաստանի նշմարիտ ինքնորոշման կոմունիստական լուսաբանութիւններով Արմէնիայի բոլշևիկները ոչ միայն չեն ջնջեցին, այլ և օր-աւուր իրենց շարքերը և իրենց շուրջը խմբեցին հաղարաւոր թիւրքահայ կայտառ ու կենսունակ երիտասարդ ուժեր, որոնք մինչ այդ անյոյս խեղդւում էին դաշնակցական նացիոնալիզմի ճահիճում։ Ուշադրաւ են այն բազմաթիւ յոլովածներն ու ողջոյնները, որ տեղում էին «Կարմիր Օրերի» և «Կարմիր Դրօշակի» խմբագրատուն։ Արձանագրենք այստեղ այդ զեղուն, անկեղծ արտայայտութիւններ-

րից մի ուշագրաւ նմուշ, որ զետեղուած է 18 թ. «Կարմիր Դրօշակի» № 2-ում, Բաքուից գրուած «Գարմէն» ստորագրութեամբ.

«Խաւար դիշերի թունաւոր մթոլորտին մէջ տառապող Հայաստանի չարքաշ, աշխատաւոր մասսաները կերազէին արշալոյս մը, որու լուսաւոր ճառագայթները փարատէին դիրենք շրջապատող թանձր խաւարը, մատակարարէին իրենց դալկացած մարմիններուն թարմ, կենսարար օդ, կազդուրիչ անուշով։

«Այո՛, Հայաստանի ժողովուրդները զուրկ են եղել լոյէ. անոր մէջ գործող կուսակցութիւնները զուրկ դասակարգային, միջազգայնական դատողութիւններ տարածելու ձգտումներէ, հրահրել են ազգայնական վայրենի, կործանարար բնազդները ու թունելով ազգայնական արկածախնդիր քաղաքականութեան ուղին, ճգնել են իմպերիալիստ պետութիւններու բարեհաճ, ողորմած ուշադրութեան արժանանալ, շարժել անոնց մարդասիրական, զուլթի զգացումները և այդ ձևով ազատագրել նշուած ժողովուրդը»։

Նեշաելով, որ այդ քաղաքականութեան արդիւնքը «սարսռազդեցիկ դիակներու կոյտեր, արեան ու արցունքի հեղեղներ» են, որ այսօր, անցեալի վերագնահատման շրջանին թիւրքահայերը» կանիծեն բոլոր այդ «ազատարար», «մարդասէր» կոչուող պետութիւնները և դեռ ևս անոնց փէշերից բռնողները, ընկեր Գարմէնը պարզ ու որոշ արտայայտում է իր հարազատ մասսաների կամքը.—

...«Թիւրքահայերս ամենաշերմկերպով պիտի կապուենք Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան հետ և դնենք մեր բոլոր ուժերը իսպառ անոր յեղափոխական, միջազգային գաղափարներու յաղթանակին»։

...«Մենք կը մտնենք Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան դրօշի տակ և անքակտելիօրէն կը կապ-

ւեանք Ռուսաստանի յեղափոխական պրոլէտարիատին, (ընդգծումը մերն է Գ. Հ.) որն աւանդարդը պիտի հանդիսանայ համաշխարհային սոցիալական յեղափոխութեան, որու կատարեալ յաղթանակով միան ապահովված կը լինի ճնշված ժողովուրդներու, հարստահարված դասակարգերու ազատագրումը»։

...«Անհրաժեշտ էր «Կարմիր Դրոշակի» երևան գալը, որու սթափեցուցիչ խօսքը իր փրկարար հետևանքը կունենայ մինչ օրս ազգայնապէս դաստիարակված թիւրքահայ չքաւոր գիւղացիութեան, աշխատաւորութեան վրայ։

«Մեր սրտագին, ամենաջերմ ողջոյնը Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան, անոր արտայայտիչ «Կարմիր Դրոշակին»։

——

Արմէնիայի Բոլշևիկները խրախուսված իրենց բանաւոր ու գրաւոր ագիտացիայի բեղմնաւոր արդիւնքներով, աւելի անսայթաք ու հաստատուն կանգնած ժողովրդների ինքնորոշման հողի վրայ, «Կարմիր Դրոշակի» 18 թ. № 3 առաջնորդողում ազդարարում են, որ «սոցիալ-մենշևիկները, սոցիալ-դաշնակցականները, սոցիալ բէդերի հետ մէկտեղ» վճռառում են ժողովրդներու ինքնորոշումը. իրենց տատանող դահերը փրկելու համար, յանցաւոր բանակցութիւններ են վարում, թիկունքից նենգօրէն հարուածելով Հայաստանի ժողովրդներին։

...«Այսօր ճակատին և թիկունքին դաւադիր հարուածներով մենք չարաչար անդունդ կը գլորինք, շնորհիւ մեր իսկ ղեկավար շրջաններու ոնրագործ քաղաքականութեան։

«Աշխատաւոր դասակարգերուն թշնամիները վաղուց են յայտարարած մեզի պատերազմը...

«Եւ նոր չէ, որ բոլոր կոմունիստները եռուն շարքերով կուի տպարէզ են նետված։

«Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը խտացնելով իր շարքերը, ունենալով իր թիկունքում Ռուսաստանի ամբողջ պրոլէտարիատն ու չքաւոր գիւղացիութիւնը, նրանց եղբայրական ողջոյնների հետ, կը պարզէ իր Կարմիր Դրօշակը, և կը կանչէ բոլոր ճշմարիտ Հայաստանցիներուն անդամագրուելու իր սոցիալիստական շարքերուն մէջ և վազելու դէպի կռիւ...

«Կռիւ Ներքին և արտաքին թշնամու դէմ»։

——

Քաղաքացիական կռուի սրբազան կոչը, մանր ազգութիւնների՝ ճշմարիտ ինքնորոշման լօզունգի տակ, աւելի հրամայողական ու աւելի ազդու հնչում է այսօր։

Հայաստանի ամեն մի ազնիւ յեղափոխական, ամեն մի անձնուէր կոմունիստ, առանց դանդաղելու և խոր գիտակցութիւնով լի, թող վազէ համարձակ,

Դէպի վերջնական ու վճռական կռիւ,

Ներքին ու Արտաքին թշնամիների դէմ -

Արմէնիայի Բոլշևիկեան կազմակերպութեան, Կոմունիստական Կուսակցութեան, Երրորդ Ինտերնացիոնալի Կարմիր Դրօշակի տակ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿՍՀ

Հայաստանի Կոմունիստական Կուսակցության հրատարակությամբ լույս են տեսել

1) Հայաստանի Կոմունիստական Կուսակցության (Բոլշևիկների) Ծրագիրը:
2) III Ինտերնացիոնալի Պլատֆորման:
3) Ն. ԼԵՆԻՆ. «Թեզիսներ բուրժուական և պրոլետարական դեմոկրատիայի մասին»—գինը՝ 50 կոպ.
4) «Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Ներկայացուցչի զեկուցումը III կոմունիստական Ինտերնացիոնալում»—գինը՝ 60 կոպ.
5) «Կոմունիստական Ինտերնացիոնալի Մանիֆեստը ամբողջ աշխարհի պրոլետարիատին»—գինը՝ 1 ր.
6) Ն. ԼԵՆԻՆ. «Երբորդ Ինտերնացիոնալի տեղը պատմության մեջ»—գինը՝ 1 ր.
7) Ն. ԼԵՆԻՆ. «Ի՞նչ պետք է ունենա մեր կուսակցության անունը»—գինը՝ 50 կ.
8) ՊԱՆՆԵԿՈՒԿ. «Գալիքի Բաժանումը»—գինը՝ 1 ր.
9) ԿԱՐԻՆԵՆԿՈ. «Ինպերալիզմ և Աբժենիա»—գինը՝ 3 ր.
10) «Կարմիր Ասող»—գինը՝ 5 ր.

Հայկական Գործերի Կոմիսարիատի հրատարակությամբ լույս են տեսել

1) Ռ. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետության Սահմանադրությունը:
2) Ն. ԼԵՆԻՆ. «Նամակ Ամերիկյան բանվորներին»—գինը՝ 1 բուբ.
3) Վ. ՖՐԻԶԵ. «Պրոլետարական պոետիան»—գինը՝ 2 ր.
4) ԶԻՆՈՎԻԵՎ. «Բրեստից մեստ» (Զեկուցում Խորհուրդների 5-րդ համագումարին)—գինը՝ 1 ր.
5) ՆԵՐՀԱԿ. «Դեպքեր Բագում, Հ. Ց. Դաշնակցությունը և Բագվի Խորհրդային Իշխանությունը»:
6) Ն. ԼԵՆԻՆ. «Պարլամենտարիզմը (Համառոտ կենսագրությունը և մարքսիզմի շարադրությունը)—գինը՝ 1 ր. 50 կ.
7) ՆԵՐՀԱԿ. «Քուսական Ցեղափոխությունը և պրոլետարիատի տակտիկան»—գինը՝ 1 ր.
8) Ն. ՐՈՒԻԼՈՒՐԻՆ. «Կոմունիստների Ծրագիրը»—գինը՝ 3 ր.
9) Մ. ՊԱՌԻՆՑԻՆ (Վեյրմանի) «Ռուսաստանը և իր դերը համաշխարհային պատերազմի մեջ»—գինը՝ 3 ր.
10) ԿԱՐԼ ՌԱԴԵԿ. I «Կոմունիստական Կուսակցությունը Գերմանիայում». II. «Կարլ Լիբկնեխտ» (Լիբկնեխտի նկարով)—գինը՝ 1 ր.
11) «Խորհրդային Կառավարության նոտան Վիլսոնին»—գինը՝ 75 կ.
12) «Միջազգային աշխատանքային պայմանագրությունը»—գինը՝ 2 ր.
13) Հ. ՑՈՒԼՈՒԿԵՆՆ. «Դեպի քաղաքական կյանք»:
14) Գ. ԶԻՆՈՎԻԵՎ, ԻՒ. ԿԱՄԱՆԵՎ և Լ. ՏՐՈՑԿԻ—«Ն. ԼԵՆԻՆ» (Վլադիմիր Իլյիչ Ուլյանով)—գինը՝ 2 ր.
15) Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ «Կոմունիստական Մանիֆեստ»—Պլեխանովի, Կաուցկու և հեղինակների առաջաբաններով—գինը՝ 3 ր.
16) Գ. ԼԱՖԻՏ «Տնտեսական Էվոլյուցիան և Կոմունիզմ»—գինը՝ 50 կ.
17) ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Ի՞նչ բան է Խորհրդային Իշխանությունը և ինչպես է նա կազմվում»—գինը՝ 2 ր.
18) «Քանանյան Ցեղ Ցեղափոխությունը»—գինը՝ 3 ր.
19) Վ. ԿԵՐԺԵՆՑԵՎ. «Ինչպես վարել ժողովը»—գինը՝ 2 ր. 50 կ.
20) Կ. ԵՐԵՄԵԵՎ. «Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետությունը»—գինը՝ 1 ր.
21) ԿԱՐՊԻՆՍԿԻ «Ո՞ւմ հետ էք դուք, գիտնականներ»—գինը՝ 50 կ